




ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ



ՍՅՈՒՆԻԱՍ ԵՐԿԻՐ

Գինը 100 դրամ:

ԵԱԲԱԹ
21 ԱՊՐԻԼԻ 2012թ. • № 9 (250)

www.syuniacyerkir.am

ՀՅՂ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ

Մենք կազմակերպված ենք,
կամք եւ վճռականություն
ունենք առաջնորդելու մեր
ժողովրդի երթը դեպի
Նոր Հայաստան, Ազատ,
Արդար եւ Բարեկեցիկ
հասարակություն:
Մենք հավաստում ենք Արդար
երկրի եւ Ազատ քաղաքացու
ստեղծագործ ներուժին:
Սա է Հզոր Հայաստանը
կերտելու գրավականը:
Մենք ունենք
վճռականություն: Մեզ
անհրաժեշտ է Ձեր ֆվեյն ու
վստահությունը:



ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու №38 ընտրապարածքում

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀՐԶԱԿԱԳԻՐ

Հայ Յեղափոխական Դաշնակցությունն՝ իբրեւ ազգային, ժողովրդավար, սոցիալիստական եւ հեղափոխական կուսակցություն, մշտապես պայքարել է հայ մարդու եւ հայության քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային շահերի համար: Հայաստանի առջեւ ծառայած ներկա արտաքին եւ ներքին մարտահրավերները պահանջում են ծանրակշիռ եւ լայնամասշտաբ համակարգային փոփոխություններ, որոնք ապահովելու համար մեր առաջնահերթություններն են.

1. ՎԵՐԱՅՆԵԼ ԱՂԵԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԶԵՒՎՈՐԵԼ ՄԻՋԻՆ ԽԱՎ ԵՎ ԱՊՐԱՅՈՒՄԸ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ

- Աղքատության շեմ կիսամարվի կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը եւ կերաշխավորվի դրամից ոչ ցածր եկամուտ ունենալու յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը: Ըստ այդմ՝ արժանավայել պայմաններ կապահովվի սահմանափակ կարողություններով յուրաքանչյուր անձի համար եւ մարդավայել կենսաթոշակ կտրվի յուրաքանչյուր թոշակառուի՝ արժանապատիվ վարձատրություն կսահմանվի բոլոր աշխատողների համար (ներկա ցուցանիշներով միջին կենսաթոշակը կլինի 63000 դրամ, նվազագույն ժամային աշխատավարձը կլինի 400 դրամից ոչ պակաս),
- Կրկնապատկվի ՀՆԱ-ն, կեռապատկվի պետական բյուջեն, կստեղծվի լրացուցիչ շուրջ 200 հազար աշխատատեղ, յուրաքանչյուր աշխատունակ մարդու համար կապահովվի աշխատանքի հնարավորություն,
- Յուրաքանչյուրին հասանելի կլինի որակյալ առողջապահությունը՝ մեկ անձի համար տարեկան առողջապահական ծախսը նվազագույնը կհասցվի 150000 դրամի,
- Յուրաքանչյուր տարի 5000-6000 կարիքավոր ընտանիք կապահովվի սոցիալական բնակարանով,
- Կզսպվեն առաջիկա 5 տարիներին գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման եւ խմելու ջրի սակագները եւ անապահով խավի համար հետագա ցանկացած փոփոխություն կկապակցվի նրանց եկամուտների հետ,
- Տնտեսության, աշխատաշուկայի եւ գիտության պահանջներին համապատասխան միջին մասնագիտական եւ բարձրագույն կրթությունը, ինչպես նաեւ նախադպրոցական եւ հանրակրթական հանրային հաստատություններն ամբողջությամբ կլինեն անվճար,

ԱՅՅԵՔԱՐՏ ■ Ծնվել է 1965թ. սեպտեմբերի 29-ին Կապանում: 1980թ. ավարտել է Կապանի լեռնամետալուրգիական տեխնիկումը, երկրաբան է: 1984-1986թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1986-1988թթ. աշխատել է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: 1988-1990թթ. աղետալի երկրաշարժից հետո աշխատել է Լենինականում: 1990թ. մասնակցել է ազգային-ազատագրական պայքարին, սկզբում՝ «Գարեգին Նժդեհ» ջոկատում, 1992-1994թթ.՝ Կապանի բրիգադի հետախուզական վաշտում՝ որպես ավագ հետախույզ: Պարգևատրվել է «Մարշալ Բաղրամյան», «Ծովակալ Իսակով» եւ ԼՂՀ «Արիության համար» մեդալներով: 2007թ. մայիսի 12-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով՝ ՀՀ կուսակցությունից: ՀՀ Գերագույն մարմնի անդամ է: ՀՀ ԱԺ ՀՀԴ խմբակցության անդամ է, 2007թ.՝ ԱԺ առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովի, 2008թ.՝ ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է: Ամուսնացած է, ունի երեք երեխա:



ՀԱՆՐԱՀԱՎԱՔ ԿԱՊԱՆՈՒՄ

ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ. «Իրենք փող ունեն, մենք՝ ժողովուրդ»

Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը քարոզարշավի իր մարզային այցելությունների շարքն ապրիլի 12-ին սկսեց Կապանից: Կապանի մշակույթի կենտրոնի հրապարակում բավականին բազմություն էր հավաքվել, իսկ ՅՅԴ-ն հանրահավաքի էր եկել՝ զինված ժամանակակից տեխնիկական միջոցներով, ցուցապատառներով ու դրոշմներով: Հանդիպումը վարում էր ՅՅԴ Կապանի «Արամ Մանուկյան» կուլտուրայի ներկայացուցիչ Սասուն Մանուկյանը, իսկ բանաստեղծները ՅՅԴ օգտին քարոզելուց ու կուսակցության սոցիալ-փոփոխական ծրագրի դրոշմները ներկայացնելուց զատ՝ խոսում էին նաև №38 ընտրատարածքում մեծամասնական կարգով իրենց թեկնածու Գագիկ Գետրոյանի օգտին ու բացատրում, թե ինչու պետք է կապանցիները ձայն տան նրան:



2012թ. ապրիլի 12: ՅՅԴ հանրահավաքը Կապանում:

Առաջին ելույթ ունեցողը՝ ՅՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը, նշեց, որ Հայաստանում ընտրատարածքի ելած քաղաքական ուժերը շատ նման են իրար, եւ բացառություն է Դաշնակցությունը, որը սոցիալիստական կուսակցություն է: «Մեր նպատակը հզոր, կազմակերպված հայրենիք, հզոր պետականություն ունենալն է: Մեր սոցիալիզմը բխում է մեր ազգային եությունից, արժեքային համակարգից»: Հ.Մարգարյանը հայտնեց, որ իրենց գոյության իմաստն է անարդարության դեմ պայքարը, որովհետեւ հայ ազգը պետք է համախմբվի պետականության շուրջ, իսկ անարդարության պայմաններում ոչ ոք իշխանության չուրջ չի համախմբվելու: «Մենք դեմ չենք հարուստներին, բայց երբ այդ հարստությունը դիվզվում է աղքատների հաշվին, մեզ համար անընդունելի է, - ասաց բանաստեղծը: - Մեզանում տարածաշրջանային մակարդակով հարուստներ են ձեւավորվում, բայց պետությունը ոտքի չի կանգնում, որովհետեւ միակ նպատակը հարուստին ավելի հարստացնելն է, գերհարուստ դարձնելը»: Իսկ այս ամենի հետեւանքն

այն է, որ երկրում արդյունաբերության փոխարեն զարգանում է առեւտուրը: ՅՅԴ բյուրոյի ներկայացուցիչ փոխանցմամբ, երբ երկրում կան աղքատություն, թշվառություն, այդտեղ անխուսափելի է առճակատումը, իսկ իշխանություններն այս ամենի պատճառները վերացնելու փոխարեն փորձում են արտաքին ուժերի «աջքին թող փչել»: «Եվ եթե ժամանակին մեր ժողովրդին կամք էր պարտադրում Մոսկվան, այսօր նաեւ՝ Վաշինգտոնը, Փարիզը, Բրյուսելը, այսօր դեսպանատներն էլ են կամք պարտադրում»: Անդրադառնալով ընտրատարածքում ՅՅԴ մեծամասնական թեկնածու Գ.Գետրոյանին՝ պարոն Մարգարյանը նշեց, որ ամեն կուսակցության կարող է պատիվ բերել նման թեկնածու ունենալը, եւ ինքն ականատես է եղել, որ անցած տարիներին թեկնածուն կապանցիների ներկայացուցիչն է եղել Երեւանում, միակ հասցեն, որին դիմել են: Իսկ այժմ պայքարում է ոչ թե

մրցակիցների, այլ փողի դեմ... Աժ պատգամավոր Արա Նաւյանը սյունեցիներին համարեց Հայաստանի ապահովության եւ անվտանգության երաշխիքը, նաեւ՝ կարելուր հենարան ՅՅԴ-ի համար: «Դրա համար ՅՅԴ-ն մարզային այցելությունների շարքն սկսում է Կապանից, որովհետեւ գիտենք, որ այստեղից է սկսվելու մեր հաղթանակը խորհրդարանական ընտրություններում»: Խոսելով երկրում առկա իրողությունների մասին՝ Ա.Նաւյանը զգուշացրեց, որ եթե ոչինչ չձեռնարկենք, այսպես էլ շարունակենք, կյանքը չի լավանա, բայց իրենք առաջարկում են կառուցել նոր Հայաստան, նոր՝ ավելի հզոր տնտեսություն, որտեղ լինելու են հազարավոր աշխատատեղեր եւ որը գրավելու է ՀՀ-ից արտագաղթած մեր հայրենակիցներին: «Եվ այդ պատճառով մենք առաջարկել ենք մի նախընտրական ծրագիր, որն արդեն, նույնիսկ մեր ընդդիմա-

դիրները, ճանաչել են անենամրցունակը, անենագրավիչն այս ընտրատարածքում: Այդտեղ մենք տալիս ենք լուծումներ, գիտենք՝ ինչն ինչ պես լուծել»: ՅՅԴ համամասնական ցուցակում ընդգրկված Նվարդ Մանասյանը, որը նոր անուն է ընտրողների համար, անդրադարձավ հատկապես այսօրվա կրթության որակին, հանրապետության կրթական խնդիրներին՝ նշելով, որ նախընտրական ծրագրում ՅՅԴ-ն անդրադարձել է նաեւ դրանց: «Կրթության ամբողջ բեռն ընկած է մի խումբ մարդկանց ուսերին, որոնք, ըստ էության, չեն գիտակցում դրա կարևորությունը, բայց իրենց հոշակել են երկրի տեր»,- ասաց Ա.Մանասյանը՝ խոսելով նաեւ ընտանեկան, երիտասարդության իրավունքի մասին: Նախկին սոցապ նախարար Ալվան Վարդանյանը հայտարարեց, որ երկրի փրկությունը բաց, ազատ, հպարտ քաղաքացին է: «Մինչդեռ,

եթե նախկինում ասում էին՝ մեզ ընտրեք, լավ է լինելու, հիմա սպառնում են՝ եթե մեզ չընտրեք, ձեզ համար վատ է լինելու»: Աղ.Վարդանյանը ընտրողներին գոտեպնդեց, թե ոչնչից չպիտի վախենալ, եւ դաշնակցությունը կանգնած է իրեն ծայր տվողների մեջքին: Բանախոսը նաեւ իրենց պատասխանատու համարեց ՅՅԴ իշխանության մաս եղած տարիներին այն ոլորտների համար, որ իրենք են ղեկավարել, ասելով, թե այդ ոլորտներում բարեփոխումներ են իրականացրել: «Բայց մենք երբեք չենք ունեցել բավականաչափ իշխանություն, որպեսզի դաշնակցության ծրագրերն իրականացնենք: Չի կարող երկրում առաջընթաց լինել, եթե ամբողջ իշխանությունը մի կուսակցության ձեռքին է»:

Նախկին գյուղնախարար Դավիթ Լոքյանն ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ աշխարհում չկա մի երկիր, որն ունենա բնական մեծ ռեսուրսներ, եւ այդ տարածքում մարդիկ դժվարություններով ապրեն: «Բնական ռեսուրսներ ունեցող տարածքներն ապահովում են նույնիսկ ողջ երկրի հարուստ կենսակերպը, իսկ մենք, Սյունիքում ունենալով հանքարդյունաբերական հսկայական պաշարներ, չենք կարողանում նույնիսկ այս տարածքի ժողովրդին նորմալ պահել: Պատճառն այն է, որ կոնցեսիոնալ առումով ՀՀ-ում լուծված չէ բնական հարստության օգտագործման հարցը, որը հավասարաչափ պետք է բաշխվի ամեն քաղաքացու, որն այս երկրի տերն է»:

Գետրոյան-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանը մարտական ոճով ելույթում հիշեց իր հրամանատարության ներքո կռված կապանցի մարտիկներին՝ պատմելով, որ հանրահավաքի ընթացքում իրեն մոտեցան իր զինվորներն ու ներկայացրին մտահոգող խնդիրները: «Պիտի անկեղծ լինեմ՝ չեմ կարող լուծել դրանք, որովհետեւ իշխանությունն չեմ, կլինեմ իշխանություն, կլուծեմ ոչ միայն նրանց, այլեւ բոլորի խնդիրները»: ՅՅԴ ԳՄ անդամ կապանցի Թաթև Հարությունյանն անդրադարձավ Կապան-ՅՅԴ պատմական առնչություններին՝ վերջում հայտարարեց, որ այս քաղաքի հարստությունը հանքաքարը չէ, այլ իր բնակիչներն են: ՅՅԴ կապանյան հանդիպումը եզրափակվեց Աժ պատգամավոր, №38 ընտրատարածքում մեծամասնական կարգով պատգամավորության թեկնածու Գագիկ Գետրոյանի ելույթով:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԶՅԱՆ

ՆԱ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՐԺԱՆԻ ԶԱՎԱԿՆ Է ԿԱՐԿԱՆ ՔԵՎՈՐԳՅԱՆ Կապանի քաղաքապետի տեղակալ

ՆԻՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ «Հայ օգնության միության» Քաղաքային մասնաճյուղի արվեստապետուհի

ՌՈՄԻԿ ԱՎԱՆԵՍՅԱՆ Նորաշենիկի գյուղապետ

ԽՈՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կապանի տարածաշրջանի «Ազատամարտի» կուլտուրի նախագահ

Մեր տարածաշրջանի ամենահասանելի պատգամավորը Գագիկ Գետրոյանն է: Նա իմ մանկության լավագույն ընկերներից է: Միասին մասնակցել ենք Արցախյան ազատամարտին: Միշտ զարմացել ենք, թե որտեղից էր իր մեջ այդքան ուժ գտնում՝ զինվորներին ոգեւորելու, հուսադրելու համար: Նա միշտ ասում է. «Միայն հայրենիքի համար կարելի է զոհվել»: Ազատամարտիկներիցս շատերը նրա մուտքը քաղաքական դաշտ ուրախությամբ ենք նրդուցել: Եւ այսօր կանգնած ենք նրա կողքին: Վերջին մի քանի տարվա ընթացքում բազմաթիվ ազատամարտիկների երեխաների ուսման կարծիքը եւ փոխանցել, փորձել հնարավորինս օգնել ու աջակցել նրանց: Երբեք չեմ հիշում մի դեպք, որ որեւէ հարցով «Ազատամարտ» կուլտուրի դիմի Գ.Գետրոյանին, եւ նա դրական լուծում չտա: Հարգված եւ սիրված մարդ է Կապանում: Հաջողություն, ուժ ու կորով եմ մաղթում նրան:

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՈՒՐԿԱԳԻԾ

ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ. գործի եւ Նվիրումի մարդը



1992թ., № զորամասի հետախուզական վաշտը: Կենտրոնում՝ Գագիկ Գեւորգյանը:



Գագիկ Գեւորգյանը եղբոր՝ Արթուրի հետ (հետագայում բրիգադի հետախուզության հրամանատար):

«Գագիկ Գեւորգյանն ազնիվ, շիտակ անձնավորություն է, ով արդեն 20 տարուց ավելի դաշնակցության շարքերում է: Ծնվել է պարզ, հասարակ ընտանիքում՝ լեռնագործի ընտանիքում, մասնակցել է Արցախյան պատերազմին եւ իր կյանքում ամեն ինչի հասել ինքնուրույն: Զի ունեցել թիկունք, չի ունեցել հարուստ հայր, իր աշխատանքով, միջավայրում ունեցած ազդեցությամբ, դանդաղ, քայլ առ քայլ հասել է նրան, որ հայոց խորհրդարանում տեղ զբաղեցնելու իրավունք է նվաճել: Ողջ դաշնակցական ընտանիքը հարգում, զմայնակում է Գագիկին, նա մեր լավագույն ընկերներից է եւ դաշնակցականներից: Կատախան, որ իրենց կանգնել, քանգնել, աշխատանքով ինչ-որ բանի հասած մարդիկ են այս երկիրը երկիր դարձնելու: Գագիկն այդ մարդկանցից մեկն է»: Ապրիլի 12-ին նախընտրական քարոզարշավի շրջանակներում կայացած հանրահավաքից հետո կարծիք հայտնեց դաշնակցության նախընտրական շտաբի համակարգող Աղվան Վարդանյանը:

Մեր ակնարկի հերոսն այն քչերից մեկն է, ում մասին գրելու եւ դյուրին է, եւ դժվար: Չէշտ է, քանզի նա իր ապրած տարիներին հասցրել է շատ բան անել. մասնակցել մերօրյա ազատամարտին, կուսակցական ստաժավոր գործիչ է, հայոց պաշտամենտի անդամ է այժմ էլ հավակնում է պատգամավոր դառնալ եւ մեծամասնական (N38 ընտրատարածք), եւ համամասնական (ՅԳԿ կուսակցության համամասնական ցուցակի 14-րդ հորիզոնականն է զբաղեցնում) ընտրակարգերով: Դժվար է, քանզի դժվար է այդքանը մի նյութի մեջ ընդգրկել: Ի դեպ, Կապանում կայացած հանրահավաքի ժամանակ Գ.Գեւորգյանն իր հոգեկերտվածքին հարիր հորդոր ուղղեց իր մրցակիցներին: «Պահանջում են բոլորից, ինձից սկսած, տանել բարձրակարգ ընտրապայքար, առանց մեկը մյուսի վրա ցելի շարտելու, առանց փոխադարձ վիրավորանք հասցնելու, խոստանում

եմ, որ երբեք նման քայլի չեմ դիմելու, բայց նաեւ զգուշացնում եմ, ով խախտի արդար ընտրապայքարի սկզբունքները, պատասխան է տալու իր արարքների համար»:

...Երբ այժ քաջեց, Գեւորգյանների ընտանիքը (ինքը երեք եղբայրներից միջնակն է) բնակվում էր Գուգան Ավետիսյան փողոցում, հետո բնակարան ստացան Շինարարների թաղամասում: Մանկական հուշերը զուգորդվում են թաղամասի մերձակա ամստառի հետ: «Քաղաքի կենտրոնից կտրված թաղամաս էր, ծառ ու թուփ չկար, մոտակա ամստառը պարզապես ձգում էր, ընկերներով ամեն օր այդտեղ էինք անցկացնում, վայրած մրգեր են մոշ հավաքում, դա երեւի իմ մանկության ամենավառ հուշն է: Այժմ էլ կրտսեր եղբայրս մորս հետ ապրում է այդտեղ, որտեղ բնակարանամուտ ենք տոնել, եթե չեմ սխալվում, 1972-ին: Գետո եկավ դպրոց գնալու ժամանակը, N10 դպրոցն էմ հաճախել: Որ ասեմ լավ էի սովորում, սուտ կլինեք, բայց տարված էի ընթերցանությամբ: Մայրս երկար տարիներ մանկապարտեզի դաստիարակչուհի է եղել: Գիմա էլ մարդիկ են պատահում, որ ասում են՝ մայրիկիդ սանն են եղել: Զես պատկերացնի, թե որքան լավ են զգում»:

Երկրաբանի մասնագիտություն է ստացել Դափանի լեռնամետալուրգիական տեխնիկումում, հետո խորհրդային բանակ: Ձորացրվելուց հետո հանք մտավ: 1988-ի փետրվարը նոր հովեր բերեց, ինքն էլ Դարաբաղը Հայաստանին վերամիավորելու, մեր պատմական տարածքներն ազատագրելու կոչեր հնչեցնողների առաջին շարքերում էր: 1988-ի վիշապի տարին այլ «մարտահրավերներ» ուներ: Դեկտեմբերի 7-ին Հայաստանի հյուսիսին պատուհասեց աշխարհավեր երկրաշարժը, հանրապետության մեկ երրորդը դարձավ աղետի գոտի: Աղետյալ հայրենակիցներին ինչ-որ բանով օգտակար լինելու ձգտումը հանգիստ չէր տալիս: Մտավ հանքավարչությունում կազմավորված ջոկատի մեջ, որ մեկնում էր աղետի

րող անցկացնել»:

Երա հասցեին երբեմն կշտամբանքներ են հնչում, թե կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ ակտիվություն չի դրսևորում, Սյունիքին առնչվող հիմնախնդիրներ չի բարձրացվում խորհրդարանում: Ինքն այդ տեսակետի հետ համաձայն չէ: Պատմում է, որ միշտ մասնակցել է խմբակցության օրենսդրական նախաձեռնություններին, երեք օրինազօծի հեղինակ կամ համահեղինակ է, մեկը վերաբերում է աշխատանքային օրենսդրությանը, մյուսը՝ բռնադատվածներին, երրորդը՝ ընտանեկան նպաստին, մասնակցել է նաեւ թիկնազորի մասին, սպառողական զամբյուղի մասին օրինագծերի մշակմանը:

Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է, մինչ այդ առավել մեծ գործառնություն ունեցող հանձնաժողովում էր՝ առողջության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովում: «Խմբակցության պատգամավոր լինելը մի քիչ դժվար է, ճիշտ է, բերանը չեն փակում, բայց առնվազն 20-25 հոգուց բաղկացած խմբակցությունը կարող է մթնոլորտ ստեղծել: Այս վերջին տարիների պրոբլեմն այն է եղել, որ խորհրդարանում ընդդիմությունը սակավաթիվ է եղել: Շատ հաճախ օրենսդրական նախաձեռնությունը չի ընդունվում, որովհետեւ ընդդիմության կողմից է առաջարկվել»:

Ինչի՞ համար է զղջացել կյանքում: Ոչ մի բանի: Բայց, երբ արդեն տարիքն առել է, իրեն միշտ բռնեցնում է այն մտքի վրա, որ հանգամանքների բերումով հիմնավոր կրթություն չի ստացել, եւ իման էլ բոլոր երիտասարդներին հորդորում է լավ սովորել: Թեեւ բազմազբաղ լինելու՝ օրվա մեջ ընթերցանության համար ժամանակ գտնում է, նախընտրում է ձեռքը գցել, գրադարակից (ասում է՝ վերջին 10-12 տարում լավ գրքեր է հավաքել) մի գիրք հանել եւ ընթերցել կամ թերթ կարդալ, քան թե նստել համակարգչի առաջ: Արագ հարցեր են տալիս:

- Ի՞նչն է վշտացնում առօրյա կյանքում:
- Իսկ ճիշտ ու թույլին ներգացնելը:
- Քո հավատանքը կյանքում:
- Մեր մեծերից մեկն ասել է. «Պետք է հերոս լինել կյանքում, պիտի ձգտես սրիկա չլինել»:
- Ի՞նչն է արգահատելի մարդու բնավորության մեջ:
- Դավաճանությունը՝ ընկերոջ հանդեպ, սկզբունքների հանդեպ:
- Ազատ, արդար ընտրություններ. հավատում ես, որ այդպես կլինի այս անգամ:
- Զեմ հավատում, բայց ինչու եմ փայփայում, որ վաղ թե ուշ այդպես է լինելու:
- Ի՞նչպե՞ս երկիրը կարող է դուրս գալ սոցիալ-տնտեսական այս սեղ լիճակից» հարցը նրան անակնկալի չի բերում: «Զեմ կարող տանել այս խնդիրները, որ կա մեր իրակազմության մեջ: Հայ ժողովուրդը շատ ու շատ լավ օրի է արժանի: Վերջերս հենց այդ մասին էի մտորում, որ մեր երկրի փրկությունը խոշոր արդյունաբերական ձեռնարկություններն ազգայնացնելն է, եթե ուզում են, որ մեր երեխաները նորմալ երկրում ապրեն: Այս պլան-բալանսին պիտի վերջ տրվի», - եզրափակում է իր մտորումները:

Ընտրություններին ընդառաջ կուսակցություններն ու մեծամասնական ընտրակարգով զբաղված պատգամավորության թեկնածուներն ընտրել են իրենց կարգախոսները: Գագիկ Գեւորգյանը ընտրություններին նախորդ ընտրություններից կուսակցության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է, մինչ այդ առավել մեծ գործառնություն ունեցող հանձնաժողովում էր՝ առողջության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովում: «Խմբակցության պատգամավոր լինելը մի քիչ դժվար է, ճիշտ է, բերանը չեն փակում, բայց առնվազն 20-25 հոգուց բաղկացած խմբակցությունը կարող է մթնոլորտ ստեղծել: Այս վերջին տարիների պրոբլեմն այն է եղել, որ խորհրդարանում ընդդիմությունը սակավաթիվ է եղել: Շատ հաճախ օրենսդրական նախաձեռնությունը չի ընդունվում, որովհետեւ ընդդիմության կողմից է առաջարկվել»:



ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՅԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ




ԱԳԱՐԱԿ



ԿԱՊԱՆ



ՄԵՂՐԻ



ՔԱԶԱՐԱՆ

թյան վերարտադրման ոչ ժողովրդավարական համակարգը եւ կիսաստատվի իշխանափոխության հնարավորություն ապահովող ամբողջական ընտրական համակարգ,

- Կծեւակորվի իշխանություն-ընդդիմություն միասնական քաղաքական համակարգ, այդ թվում, ազդեցիկ լծակներ կտրամադրվեն քաղաքական ընդդիմությանը՝ իշխանություններին վերահսկելու, զսպելու եւ հակակոռուպցիոն իրական պայքար ծավալելու նպատակով
- Պետականորեն կամրայնացվի ու կընդլայնվի մասնակցային եւ անմիջական ժողովրդավարությունը,
- Կգործադրվի բացառապես անձի ունակությունների ու փորձի վրա հիմնված թափանցիկ կադրային քաղաքականություն,
- Կբացառվի պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման գործում քաղաքական եւ տնտեսական գործառույթների զուգակցումը:

4. ՀԱՏԱՏԵԼ 21-ՐԴ ԳԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՐԺԵ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ՈՒՆԵՔԻՍ

- Համաշխարհայնացման եւ արագ փոփոխվող ներկա աշխարհում երկրի առաջընթացն ու զարգացումը կիրականացվեն՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական եւ փոխշահավետ հարաբերություններով, առանց զիջելու եւ վտանգելու համագային ձեռքբերումները, նպատակներն ու շահերը,
- Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը կիրականացվի՝ չնահանջելով Արցախի ժողովրդի համաժողովրդական հանրաքվեներով արդեն իսկ արտահայտած կամքից,
- Հետ կկանչվի Հայաստանի ստորագրությունը հայ-թուրքական արձանագրություններից, իսկ Հայաստանի եւ Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման համար՝ չեն վտանգվի համագային նպատակներն ու պատմական արդարության վերականգնման հեռանկարը,
- Պետության եւ համայն հայության ուժերով աջակցություն կցուցաբերվի Ջավախքի քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային իրավունքների լուծմանը,
- Կբարձրացվեն Հայաստանի անկախության եւ անվտանգության երաշխավոր հայոց ազգային բանակի մարտունակությունը, կարգապահությունը, արդիականությունը,
- ՀՀ արտաքին քաղաքականության մեջ առաջնորդող սկզբունք կհամարվի այն, որ Հայոց պետականությունը ոչ միայն Հայաստանի, այլեւ համայն հայության ազգային նպատակների իրականացման երաշխավորն է: Ըստ այդմ ամեն ինչ կարվի սփյուռքահայությանը հայոց պետականության գործընթացում լիարժեքորեն ընդգրկելու համար:

ՀԱՅ ՅԵՐԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Սկիզբը՝ էջ 1

- Յուրաքանչյուր երիտասարդ կույնեմա ինքնադրսեւորվելու լիարժեք հնարավորություն՝ որակյալ կրթություն ստանալու, ստեղծագործելու, աշխատելու եւ բիզնեսով զբաղվելու համար երաշխավորված համակարգ,
- 20000-ից 60000 դրամ ամենամսյա տարբերակված նպաստ կտրամադրվի մինչեւ 7 տարեկան յուրաքանչյուր երեխայի համար, իսկ 5 եւ ավելի երեխաներով ընտանիքներին՝ նաեւ անվճար բնակարան,
- Ժողովրդագրական ակտիվ պետական քաղաքականության միջոցով Հայաստանի բնակչությունը տարեկան միջինը կաճի 50000 անձով,
- Ներդրումներ կներգրավվեն

մշակույթի ոլորտ, մշակութային քաղաքականությունը կհամարվի երկրում իրականացվող բարեփոխումների մախապայման, կընդլայնվի աշխարհին հայկական մշակույթի ներկայացվածությունը:

2. ԶԵՎԱԿՈՐԵԼ ԿՅՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՂ ՄՐՅՈՒՆԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Պետությունը պասիվ բարեփոխիչ կվերածվի երկրի կայուն զարգացման մասնակցի եւ պատասխանատուի,
- Կբացառվի սեփականության իրավունքի ունեւորումը, կծեւակորվի տնտեսության ազատ մրցակցային միջավայր,
- Կգործադրվի արդար բաշխում ապահովող պրոգրեսիվ եկամ-

տահարկի, գերշահույթի, ճոխության ու գերիարտության հարկման լիարժեք համակարգ,

- Կիրականացվի տնտեսության դիվերսիֆիկացիային, տնտեսական աճին եւ տեղական արտադրության հզորացմանը միտված դրամավարկային եւ բյուջետային քաղաքականություն,
- Սփյուռքի եւ անդրազգային ընկերությունների ներդրումները կներգրավվեն հատկապես հեռանկարային ինովացիոն մախագծերում եւ բարձր տեխնոլոգիական արտադրությունում,
- Երկրի պարենային անվտանգությունն ապահովելու նպատակով կգործադրվի գյուղատնտեսության պետական աջակցության սուբսիդիաների, դոտացիաների եւ արտոնությունների տրամադրման ամբողջական համակարգ, տարեկան բյուջետային աջակցությունը հասցնելով 60 մլրդ դրամի,
- Մարզերի զարգացումը կիրականացվի տարաբնակեցման հայեցակարգի հիման վրա բազմակենտրոն եւ հավասարաչափ,

- Տնտեսական նախագծերը կիրականացվեն բացառապես շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության փորձաքննության արդյունքների հիման վրա, հանրային շահի լիարժեք հաշվառմամբ: Ընդ որում՝ Երեւանի կենտրոնում կարգվի բնակարանային շինարարությունը, իսկ կանաչ տարածքներն ու ջրային մակերեսները կեռապատկվեն:

3. ԿԱՌՈՒՅԵԼ ԺՄԱՆԱԿԱԿԱՐԿՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ

- Կիրականացվեն սահմանադրական փոփոխություններ՝ ուղղված խորհրդարանական կառավարման համակարգի, Հայաստանի վարչատարածքային նոր բաժանման, ԱԺ պատգամավորների թվի կրճատման, մարզպետների ընտրության, ինչպես նաեւ դատական համակարգի իրականանկախությունն ապահովող մեխանիզմների ամրագրմանը,
- Արմատախիլ կարվի իշխանու-